

3257

3258

3259

3260

9(47.929)

4-92

9(44)

№ 1

Ա. ՊԱՏԱՄԲԱԿԱՆ ՈԳԻ

Թարգմանութիւն Ֆրանսերէնից



ՎԻԵՆՆԱ

Հ. Յ. Գաշնակցութեան ազատ տպարան

1893

37140-66

Հասարակութիւնների կեանքում լինում են այնպիսի րոպէներ, երբ յեղափոխութիւնը մի անհրաժեշտ և անխուսափելի պահանջ է դառնում: Ամեն տեղ նոր գաղափարներ են սկսում ծագել. նոքա ձգտում են դէպի լըյս աշխարհ, ձգտում են մի որ և է գործադրութիւն գտնել կեանքի մէջ բայց հանապազ զարնվում են հին կարգերը պաշտպանելում շահ ունեցողների ընդդիմադրական անշարժ ոգուն. նոքա խեղդվում են հին նախապաշարմունքների և աւանդութիւնների հեղձուցիչ մթնոլորտում: Պետութիւնների կազմակերպութեան, հասարակական հաւասարակշռութեան, օրէնքների, մարդկանց քաղաքական և անտեսական փոխադարձ յարաբերութիւնների մասին կազմած գաղափարները այլ ևս չեն դիմանում լուրջ և խիստ քննադատութեան. նոքա քայքայվում են ամեն օր և ամեն տեղ. թէ շքեղ դահլիճում և թէ հասարակ խորճիթում. թէ փիլիսոփայական գրուածքում և թէ աւօրեայ խօսակցութեան մէջ: Քաղաքական և հասարակական հիմնարկութիւնները աւերակ են դառնում: Ամայի դառցած շինութիւնը նեղում, արգելում է աճել այն սերմերին, որոնք ծնունդ են առնում թէ նորա ճեղքուած պատերում և թէ նորա շուրջը:



8

50971-Ա-2

Զգացվում է մի նոր կեանքի պահանջ: Բարոյակա-
 նութեան սովորական օրենքները, որոնցով ղեկավարվում
 է հասարակութեան մեծամասնութիւնը իր առօրեայ
 կեանքում, այլ ևս բաւարար չեն համարվում: Ահսում
 են նկատել, որ մինչև այն ժամանակ արդար համար-
 վածը ակնեղև անարդարութիւն է, որ երեկվայ բարոյ-
 ականութիւնը սարսափելի անբարոյականութիւն է: Հին
 աւանդութիւնների և նոր գաղափարների մէջ պատերազ-
 մը ծագում է հասարակութեան բոլոր խաւերում, բո-
 լոր շրջաններում, մինչև իսկ ընտանեկան օջախներում:
 Որդին կոչում է հօր հետ. նորան զայրացնում է այն,
 ինչ որ հայրը իր ամբողջ կեանքում բոլորովին բնա-
 կան էր համարում: Աղջիկը կատաղում է այն սկզբ-
 բունքների դէմ, որ նորան քարոզում է մայրը, իբրև
 իւր բազմամեայ փորձառութեան արգասիք: Ժողովրդի
 գիտակցութիւնը ապստամբվում է այն խայտառակու-
 թիւնների դէմ, որ կատարում են անգործ և առանձնա-
 շնորհեալ դասակարգերը. ապստամբվում է այն ոճրա-
 գործութիւնների դէմ, որոնք կատարվում են յանուն
 յբունցքի իրաւունքի՝ և զանազան առանաշնորհումներ
 պահպանելու համար: Նա, ով ձգտում է արգարու-
 թեան յաղթանակին, ով ցանկանում է իրականացնել
 նոր գաղափարներ, համոզվում է շուտով, որ իր բա-
 րենորոգիչ, մարդասիրական վսեմ գաղափարները ան-
 կարելի է մարմնացնել տալ տեսակ կազմակերպութիւն
 ունեցող հասարակութեան մէջ: Նա հասկանում է, որ
 յեղափոխական փոթորիկը անհրաժեշտ է, որ միայն նա
 է կարող մաքրել հասարակութեան դարևոր ժանգը,

իր շնչով կենդանութիւն տալ սառած սրտերին և ներ-
 շնչել մարդկութեանը անձնորացութեան, անձնագը-
 հութեան վեհ ոգին, առանց որի՝ հասարակութիւնը
 փչանում, ստորանում և քայքայվում է:

. . . Առավարչական մեքենան, որի կոչումն է ներ-
 կայ կարգերը պահպանելու, դեռ շարունակում է գոր-
 ծել: Բայց իր կտարած անխնեւերի ամեն մի պտոյտին՝
 նա սայթաքում է և կանգ առնում: Նորա գործունէու-
 թիւնը աւելի և աւելի է դժուարանում, իսկ սխալնե-
 րի պատճառաւ ծագած անբաւականութիւնը աճում է
 օրէցօր: Ամեն օր նոր նոր պահանջներ են առաջ գալիս:

„Բարենորոգեցէ՛ք այս, բարենորոգեցէ՛ք այն“, աղա-
 զակում են ամեն կողմից—„պատերազմը, ֆինանսը, հար-
 կերը, դատարանները, ոստիկանութիւնը—ամեն ինչ հար-
 կաւոր է դրստել, վերանորոգել, նոր հիմունքների վրա
 դնել“ կոչում են բարենորոգիչները: Սակայն, բոլորն էլ
 հասկանում են, որ անկարելի է առանձնապէս գլուխ բե-
 րել այս կամ այն բարեփոխումը, որովհետև դորա բո-
 լորը սերտ կապ ունեն իրար հետ: Հարկաւոր է բոլորը
 միանգամից նորոգել. բայց ինչպէս անել, երբ հասարա-
 կութիւնը բաժանված է երկու հակառակ բանակի. բաւա-
 րութիւն տալ անբաւականներին՝ այդ նշանակում է
 ստեղծել անբաւականների մի նոր բանակ . . .

Առավարութիւնը, անկարող լինելով ի՞նչ բարե-
 փոխումներ անելու— որովհետև այդ կը նշանակէր որ
 ինքն է սկսում յեղափոխութիւնը— և միևնոյն ժամանակ
 անզօր գտնվելով համարձակ կերպով ընկեցիտային դի-
 մելու, շարժման առաջն առնելու, սկսում է կիսատ պը-

Զգացվում է մի նոր կեանքի պահանջ: Բարոյակա-
նութեան սովորական օրէնքները, որոնցով ղեկավարվում
է հասարակութեան մեծամասնութիւնը իր առօրեայ
կեանքում, այլ ևս բաւարար չեն համարվում: Սկսում
են նկատել, որ մինչև այն ժամանակ արդար համար-
վածը ակնբերե անարդարութիւն է, որ երեկվայ բարոյ-
ականութիւնը սարսափելի անբարոյականութիւն է: Հին
աւանդութիւնների և նոր գաղափարների մէջ պատերազ-
մը ծագում է հասարակութեան բոլոր խաւերում, բո-
լոր շրջաններում, մինչև իսկ ընտանեկան օջախներում:
Որդին կռվում է հօր հետ, նորան զայրացնում է այն,
ինչ որ հայրը իր ամբողջ կեանքում բոլորովին բնա-
կան էր համարում: Ազջիկը կատարում է այն սկզբ-
բունքների դէմ, որ նորան քարոզում է մայրը, իբրև
իւր բազմամեայ փորձառութեան արգասիք: Ժողովրդի
գիտակցութիւնը ապստամբվում է այն խայտառակու-
թիւնների դէմ, որ կատարում են անգործ և առանձնա-
շնորհեալ դասակարգերը. ապստամբվում է այն ոճրա-
գործութիւնների դէմ, որոնք կատարվում են յանուն
«բռնցքի իրաւունքի» և զանազան առանձնաշնորհումներ
պահպանելու համար: Նա, ով ձգտում է արդարու-
թեան յաղթանակին, ով ցանկանում է իրականացնել
նոր գաղափարներ, համոզվում է շուտով, որ իր բա-
րենորդիչ, մարդասիրական վնեմ գաղափարները ան-
կարելի է մարմնացնել այդ տեսակ կազմակերպութիւն
ունեցող հասարակութեան մէջ: Նա հասկանում է, որ
յեղափոխական փոթորիկը անհրաժեշտ է, որ միայն նա
է կարող մաքրել հասարակութեան դարևոր ժանգը,

իր շնչով կենդանութիւն տալ սառած սրտերին և ներ-
շնչել մարդկութեանը անձնորացութեան, անձնագո-
հութեան վեհ ոգին, առանց որի հասարակութիւնը
փչանում, ստորանում և քայքայվում է:

. . . Վառավարական մեքենան, որի կոչումն է ներ-
կայ կարգերը պահպանելու, դեռ շարունակում է գոր-
ծել: Բայց իր կտորած անխնորհ ամեն մի պտոյտին՝
նա սայթաքում է և կանգ առնում: Նորա գործունէու-
թիւնը աւելի և աւելի է դժուարանում, իսկ սխալնե-
րի պատճառաւ ծագած անբաւականութիւնը աճում է
օրէցօր: Ամեն օր նոր նոր պահանջներ են առաջ գալիս:

«Բարենորոգեցէ՛ք այս, բարենորոգեցէ՛ք այն», աղա-
ղակում են ամեն կողմից, «պատերազմը, Ֆինանսը, հար-
կերը, դատարանները, ոստիկանութիւնը, ամեն ինչ հար-
կաւոր է դրստել, վերանորոգել, նոր հիմունքների վրա
դնել» կոչում են բարենորոգիչները: Սակայն, բոլորն էլ
հասկանում են, որ անկարելի է առանձնապէս գլուխ բե-
րել այս կամ այն բարեփոխումը, որովհետև դոքա բո-
լորը սերտ կապ ունեն իրար հետ: Հարկաւոր է բոլորը
միանգամից նորոգել. բայց ինչպէս անել, երբ հասարա-
կութիւնը բաժանված է երկու հակառակ բանակի. բաւա-
րարութիւն տալ անբաւականների՝ այդ նշանակում է
ստեղծել անբաւականների մի նոր բանակ . . .

Վառավարութիւնը, անկարող լինելով ի՛բր բարե-
փոխումներ անելու, որովհետև այդ կը նշանակէր որ
ինքն է սկսում՝ յեղափոխութիւնը, և միևնոյն ժամանակ
անզօր գտնվելով համարձակ կերպով ընկնցիտային դի-
մելու, շարժման առաջն առնելու, սկսում է կիսատ պը-

ուստ բարենորոգումներ անել, որը ոչ մէկին չը բաւակա-
նացնելով հանդերձ՝ առաջացնում է միայն նոր անբա-
ւականութիւններ: ✕

Միջակ ընդունակութիւնների տէր մարդիկ, որոնք այդ-
պիսի մի ժամանակ յանձն են ածնում կառավարչական
ղեկը վարել, աչքի առաջ ունենալով մտակալ խառ-
նաշփոթութիւնը, ձգտում են միայն մի բանի, - հարստու-
թիւն դիզելու: Պաշարված լինելով ամեն կողմից՝ այդ
մարդիկ շատ անշնորհ կերպով են պաշտպանվում. նորա
շշկլած դէս ու դէն են րնկնում, մէկը միւսի յետևից յի-
մարութիւններ անում և կտրում շուտով փրկութեան
վերջին թելը: Նորա ծիծաղի առարկայ են դարձնում
կառավարութեան հեղինակութիւնը իրենց անընդունա-
կութեամբ: Մի այսպիսի ժամանակ՝ յեղափոխութիւնը
անխուսափելի է. նա անհրաժեշտ պահանջ է դառնում
հասարակութեան համար. իրերի այդ տեսակ դրութիւ-
նը՝ յեղափոխական դրութիւն է...

Երբ ուսումնասիրում ենք մեծ յեղափոխութիւնների
ծագումը և զարգացումը մեր լաւագոյն պատմութիւննե-
րով, մենք սովորաբար գտնում ենք յՅեղափոխութեան
պատճառները՝ վերնագրի տակ այդ շարժումների նախ-
ընթաց օրերի հետևեալ պատկերը. հասարակ ժողովր-
դի ծայրայեղ թշուառ դրութիւն, ընդհանուր կատար-
եալ անապահովութիւն, կառավարութեան ճնշումներ,
հասարակական մեծ խտտերը երևան հանող գարշելի
խայտառակութիւններ, դէպի լոյս աշխարհ ձգտող և
հին բեժիմի անընդունակ պաշտպաններին գարնվող նոր
գաղափարներ, - ահա թէ ինչ ենք տեսնում այնտեղ:

Ձննելով այս պատկերը, մարդ գալիս է այն եզրակա-
ցութեան, որ իսկապէս յեղափոխութիւնը անխուսափե-
լի էր, որ բացի ապստամբական ճանապարհից մի ուրիշ
եւք չէր կարելի գտնել:

Տեսնենք, օրինակ, ինչպէս են նկարագրում պատմա-
բանները 1789 թ. ֆրանսիական յեղափոխութեան նախ-
ընթաց օրերը: Դուք լսում էք գիւղացու գանգառը
հարկի, տանանորդի, աւատական տուրքերի դէմ. տես-
նում էք նորա անողոք ատելութիւնը դէպի աղաները,
արեղան, վաշխառուն, ինտենտանդը: Ձեր ականջին է
հասնում բուրժուաների (միջին, ունևոր գասակարգի) ող-
բը՝ իրենց քաղաքային արտօնութիւններից զրկվելու հա-
մար և այն նգովքը, որ նորանք թափում են թաղաու-
րի գլխին: Դուք լսում էք, ինչպէս է ժողովուրդը պար-
սաւում թագուհուն, զայրանում նախարարների դէմ,
գանգատվում ամեն մի բոպէ, որ հարկերը անտանելի
են, տուրքերը անչափ, անսահման, որ հունձը վատ է,
ձմեռը սաստիկ, որ կենսական պիտոյքները թանկ են,
վաշխառուն անյագ, որ շինական փաստաբանը լափում
է գիւղացու հունձը, որ մինչև իսկ փոստը անկանոն է,
պաշտօնեաները ծոյլ կաշառակեր, և եսսավուրը - փոք-
րիկ բռնակալ...

Մի խօսքով, կարգին բան չը կայ. բոլորն էլ գան-
գատվում են: Սա չէ կարող երկար տևել, սորա վերջը
վատ կը լինի,՝ Լսվում է ամեն կողմից:

Բայց չէ՞ որ, այս անմեղ, խաղաղ գատողութիւն-
ների և բուն ապստամբութեան արանքում մի ա-
հագին վիճ կայ, որը մարդկութեան մեծամասնութեան

խօսքը բաժանում է գործից, միտքը կամքից, գործե-
 ւու պահանջից: Ինչպէ՞ս է անհետանում այդ անդունդը:
 Ինչպէս է լինում, որ այն մարդիկ, որոնք դեռ երեկ
 բոլորովին խաղաղ կերպով, չիբուխները քաշելով, գան-
 դատվում էին իրենց չար բախտից, որոնք մինչև դէտին
 խոնարհաբար գլուխ էին իջեցնում այս կամ այն ոստի-
 կանին, որին մի քիչ առաջ հայհոյում էին, ինչպէս է
 լինում, որ մի քանի օրից յետ նոյն մարդիկ վերցնում
 են իրենց մանգաղները, երկաթագլուխ դագանակները
 և յարձակվում մի քիչ առաջ ահ ու սարսափ ներշնչող
 աղայի ամբոցի վերայ: Այն ինչ կախարդական ոյժ է, որ
 կերպարանափոխում, հերոսներ է դարձնում այն մարդ-
 կանց, որոնց ամենայն իրաւամբ իրենց ամուսինները երկ-
 չոտ էին համարում, բայց որոնք այսօր հրացանի և թըն-
 դանօթի գնտակների կարկտի տակ ընթանում են դէպի
 իրենց ազատութիւնը: Ինչպէս հազար անգամ արտա-
 սանած խօսքերը, որոնք մի ժամանակ անհետանում,
 կորչում էին տարածութեան մէջ զանգակի ձայնի պէս,
 ինչպէս են այդ խօսքերը փոխվում գործի:

Պատասխանը դժուար չէ տալ:

— Դա փոքրամասնութեան գործունէութիւնն է,
 յարատեւ, անընդհատ կրկնվող գործունէ-
 նէութիւնը: Քաջութիւնը, անձուրացութիւնը, անձ-
 նագոհութեան ոգին նոյնպէս վարակիչ են, ինչպէս և
 երկչոտութիւնը, հլութիւնը և սարսափը:

Բայց ինչ միջոցների պէտք է դիմէ փոքրամասնու-
 թեան այդ գրգռիչ գործունէութիւնը:

— Բոլոր այն բազմատեսակ միջոցներին, որ կը թե-

ւադրեն հանգամանքները, պայմանները, բնաւորութիւն-
 ները. երբեմն մտայլ երբեմն ծաղրական, բայց միշտ
 համարձակ. երբեմն հաւաքական ոյժով, երբեմն լու-
 անհատական: Չպէտք է արհամարել ձեռքի տակ ու-
 նեցած ու մի միջոց, հասարակական ոչ մի հանգամանք:
 Պէտք է հասարակութեան ոգին միշտ արթուն պահել,
 անբաւականութիւն սերմանել նորա մէջ, տղրուկների
 դէմ ատելութիւն յարուցանել, կառավարիչներին ծաղ-
 րալի դարձնել, երևան հանել նոցա թուլութիւննե-
 րը, և որ ամենագլխաւորն է՝ միշտ կենդանի օրինակներ
 տալով՝ վառ պահել ապստամբական համարձակ ոգին:

||

Երբ մի որևէ երկրում առաջ է դալիս յեղափոխա-
 կան դրութիւն, և միևնոյն ժամանակ ամբոյնի ապրս-
 տամբական ոգին դեռ այն աստիճան զարգացած չէ լի-
 նում, որ կարողանան տեղի ունենալ փողոցային աղմկա-
 լի ցոյցեր, յուզումներ և ապստամբութիւն, այդպիսի մի
 ժամանակ փոքրամասնութեան գործունէութիւնն է մի-
 այն՝ անկասութեան զգացմունք, համարձակութեան ո-
 գի զարթեցնողը, առանց որի ոչ մի յեղափոխութիւն
 չի կարող գլուխ գալ:

Արիասիրտ մարդիկ, որոնք չեն բաւականանում մի-
 այն խօսքով, այլ ձգտում են գործագրել այդ խօս-
 քերը, ազնիւ բնաւորութիւններ, որոնց համար խօսքը
 և գործը մէկ է, որոնք բանտը, արստը, մինչև իսկ մա-
 հը գերադասում են իրենց սկզբունքների հակառակ
 կեանքին. աներկիւղ մարդիկ, որոնք համոզված են, որ

գործի յաջողութեան համար հարկաւոր է համարձակու թիւն, ահա թէ ովքեր են՝ կորստի դատապարտված, գաղափարի առաջին կարապետները, ահա թէ ովքեր են սկսում կռիւը, նախ քան ամբոխը պատրաստ է լինում՝ պարզած գրօշակներով ապստամբութեան դիմելու, զէնքը ձեռքին՝ ազատութիւն ձեռք բերելու...

Մինչդեռ մեծամասնութիւնը բաւականանում է լոկ տրտունչներ արտայայտելով, մինչդեռ միւսները զբաղված են լինում գատարկաբանութիւններով, կամ տեսական վէճերով, մէկ էլ ես տեսնում մի անհատի կամ խումբի ձեռքով յանկարծ կատարվում է մի ապստամբական գործ, իբրև հասարակութեան մէջ տիրապետող ձգտումների արտայայտութիւն: Արող է պատահել, որ ամբոխը սկզբներում անտարբեր մնայ: Արող է պատահել, որ նա՝ զարմանքներ յայտնելով անհատի կամ խմբի քաջութեան վերայ, մի և նոյն ժամանակ հետևէ իմաստուններին, խոհեմներին, որոնք շտապում են այգպիսի մի գործ յսկսելու (թիւն)՝ անունով կնքել և որոնք պարտք են համարում անդադար բղաւել: Սկսելով, տաք գլուխները ամեն ինչ կռփացնեն: 2է որ այդ իմաստուն, խոհեմ գործիչները իրենց մէջ շատ լաւ հաշիւ են, որ այդպէս, կամաց կամաց ընթանալով՝ մի, երկու, շատ շատ երեք հարիւր տարուց յետոյ, կարող կը լինեն անպատճառ աշխարհիս տէրը դառնալ, բայց յանկարծ՝ մի ինչ որ անակնկալ երևոյթ է տեղի ունենում, անակնկալ ՚ի հարկէ, իմաստունների համար: Ինչպէս չը վերդովուել: Ով քիչ թէ շատ ծանօթ է պատմութեան հետ և մտածելու կարողութիւնից զուրկ չէ, արդէն գիտէ

շատ լաւ, որ յեղափոխական քարոզները փոխադրվում են գործի իմաստունների տեսական վճռից շատ առաջ: Բայց և այնպէս՝ այդ իմաստունները զսյրանում են խենթների դէմ, նդովում են նորանց և անէծք թափում զըլտններին: Յակայն յսկսելով՝ համակրանք են գտնում, ամբոխը լուռ ծափահարում է նրանց համարձակ ոգուն և իր միջից նորանց հետևողներ արտադրում: Բանտերը, արսորավայրերը լքվում են նրանց առաջին շարքերով, բայց գալիս են նորերը, նորանց տեղը բռնում և սկսածը շարունակում: Օրինազանց բողոքները, ապստամբական և վրէժխնդրական գործողութիւնները աւելի և աւելի են սաստկանում:

Անտարբեր մնալ այլ ևս անկարելի է: Սկսելով արարքներով չը հետաքրքրվողները ստիպված են զբաղվել նրանցով, ստիպված են քննել դրանց գաղափարները և կամ կողմնակից, կամ հակառակորդ դառնալ: Նոր գաղափարը, գործով արտայայտվելով, ընդհանուրի ուշագրութիւնն է գրաւում, ներս է թափանցում ուղեղների մէջ և հետևողներ գտնում: Մի որ և է գործողութիւն մի քանի օրուայ ընթացքում աւելի շատ բան է կատարում, քան թէ հազարաւոր բրօշխրներ:

Գործողութիւնն է, գլխաւորապէս, ապստամբական ոգին զարթեցնողը, համարձակութիւն սերմանողը: Աստիկաններով, պաշտօնեաներով, ժանդարմներով, զինուորներով պաշտպանված Գրանսեսայտի հին բէժիմը (կարգե-

ըր), անխախտ էր թուում, ինչպէս անխախտ էր թուում
 և Բաստիլ ամրոցը՝ նորա բարձր և թնդանթնեքով
 զինված պատերի տակ կուտակված անգէն ամբոխի աւ-
 քում: Սահայն շուտով պարզ եղաւ, որ ներկայ ըէժիմն
 չունի այն ոյժը, որը նորան վերագրում էին: Մի հա-
 մարձակ քայլ բաւական էր մի երկու օրուայ միջոցում
 տակն ու վրա անել կառավարչական մեքենան և տապա-
 ւել հսկային: Մի խառնաշփոթութիւն բաւական էր ամ-
 բողջ գաւառը ոտի կանգնեցնելու. մինչև այդ ժամա-
 նակ սարսափ ազդող զօրքի գունտը ստիպված էր փա-
 խուստ տալ քարերով և փայտերով զինված մի բուռն
 զիւղացիների առաջ: Թողովուրդը տեսաւ, որ հրէշը այն-
 քան էլ զարհուրելի չէ, որքան կարծում էր. նա սկսում
 է հասկանալ, որ բաւական կը լինի մի երկու սաստիկ
 հարուածներ նրան տապաւելու համար: Մարզկանց սըր-
 տերը սկսում են բաբախիլ յուսով. և չմոռանանք, որ
 եթէ խառնաշփոթութիւն առաջ բեքողը զրգումն է,
 դա յայ թութեան յոյսն է միշտ՝ որ առաջ է բերում յե-
 ղափոխութիւն: Առավարութիւնը զիմադրում է. նա կա-
 տաղաբար սկսում է իր հալածանքը: Բայց եթէ խստու-
 թիւնը մի ժամանակ սպանում էր ճնշվածների եռանդը,
 այսօր, ժողովրդի յուզված ըուկէին, նա ընդհակառակը՝
 նոր ապստամբական ցոյցեր է յարուցանում, թէ անհա-
 տական և թէ խմբական: Նա մղում է ապստամբներին
 դէպի հերոսութիւն. ապստամբութիւնը տարածվում է
 և այլ խաւերում, նա ընդհանրանում է և զարգանում:
 Յեղափոխական կուսակցութիւնը նոր ոյժեր է ձեռք բե-
 րում թէ իրեն թշնամի և թէ անտարբերութեան մէջ փը-

տող տարբերից: Առավարութեան և տիրապետող, ա-
 ռանձնաշնորհեալ դասակարգերի մէջ խառնակութիւն է
 ընկնում: Մի քանիսը առաջարկում են ծայրայեղ ընդ-
 դիմադրութիւն, միւսները կանգնած են զիջում անելու
 համար, ոմանք էլ ապստամբութիւնը խաղաղացնելու
 նպատակաւ մինչև անգամ պատրաստականութիւն են
 յայտնում մի ըուկէ հրաժարվել առանձնաշնորհումնե-
 րից՝ յետոյ նորից ձեռք գցելու յուսով: Առավարու-
 թեան և առանձնաշնորհեալների մէջ եղած կապը կըտ-
 րուած է . . .

Առավարութիւնը կարող է փորձել ևս կատաղի ըէակ-
 ցիայի, յետաշրջման զիմելու. բայց արդէն ուշ է. կուրը
 աւելի սուր կերպարանք միայն կառնի, նոր ծագող յե-
 ղափոխութիւնը աւելի արինահեղ կը լինի: Միւս կող-
 մից՝ կառավարութեան արած ամենաչնչին զիջումն ան-
 գամ աւելի կարող է բորբոքել յեղափոխական ոգին, ո-
 ըրովհետև այդ զիջումները ուշ են կատարված, որով-
 հետև նրանք ոյժով են խլած: Թողովուրդը, որ առաջ
 կարող էր գոհ մնալ այդ զիջումներից, այսօր տես-
 նելով իւր առաջ տկարացած թշնամուն, նախատեսում
 է իր իրաւունքների յալթանակը, զգում է, որ իր հա-
 մարձակութիւնը աճում է. և այն մարդիկ, որոնք դեռ
 երեկ բաւականանում էին դադանի կերպով ախ ու վախ
 քաշելով, այսօր բարձրացնում են գլուխները և համար-
 ձակ ընթանում՝ բազկի ուժով ձեռք բերելու աւելի
 վաւ ապագայ:

Վերջապէս յեղափոխութիւնը պայթում է, և այն ա-
 տիճան սոսկալի ոյժով, ինչ աստիճան կատաղի է եղել

IV

... Բայց փոքրիկ գիւղերում ապստամբութիւն պատրաստողը ոչ նախարարներին դէմ յարուցած ցոյցերն էին և ոչ էլ Պարիզի պատերին կայցրած, թագաւորու անառակ կեանքը մերկացնող թերթերը: Այդ ապստամբութիւնը, խօսք չը կայ, երկրի ընդհանուր դրութեան հետեանք էր, բայց նա նոյնպէս պատրաստվել էր ժողովրդի սրտի մէջ տեղի ունեցած ազիտացիայով, ժողովրդին իր անամ իջական թշնամ ինտերի՝ աղայի, հարկահանի, կեղեքիչ հոգևորականի, վաշխառու ցորենավաճառի, հաստափոր հարուստի դէմ գրգռելով:

Պամֆլէտը, պասկվիլը և այլ թերթերը մուտք չէին գործում գիւղերը. այդ ժամանակուայ գիւղացին համարեա թէ կարդալ չը գիտէր: Գրանց տեղը բռնում էր պարզ և հասկանալի շատ անգամ էլ ձեռքով խզողած պատկերը, որի կողքին գծած մի քանի խօսքերը բառական էին՝ երևակայութեան մէջ թագաւորի, թագուհու, Արտուա կոմսի, տիկին Նամբալի, աղաների, "ժողովրդի արիւնը ծծող վամպիրներին" վերաբերմամբ մի ամբողջ վէպ ստեղծելու: Այդ նկարները գիւղից գիւղ, ձեռ-

) Երրորդ գլխում հեղինակը խօսում է լրագրի, երգերի, ազգագրերի, թուոցիկ թերթերի և այլ գրգռիչ միջոցների մասին, որոնց գլխաւոր նպատակն է եղել անողջը հարուածներ հասցնել կառավարութեան, երևան հանել մեծամեծների կեղտոտութիւնները և դորանով վայր ձգել զբանց հեղինակութիւնը ժողովրդի աչքում: Ծ. Թ.


քից ձեռք անցնելով, պատրաստում էին մտքերը: Ծառին կայցրած մի ազգագիր գրգռում էր ժողովրդին դէպի ապստամբութիւն, խոստանալով աւելի լաւ օրեր և պատմելով Ֆրանսիայի միւս ծայրերում ծագած ազմուկների մասին:

Գիւղերում "Թ ա կ" անուան տակ գաղտնի խմբեր էին կազմվում, որոնք կրակ էին տալիս աղաների ամբարները, փչացնում էին նորա վար ու ցանքը, որսատեղը և մինչև իսկ մահով պատժում նրանց: Քանի, քանի անգամ են ամբոցի մէջ գտել կալուածատէր-աղայի ընկած դիակը՝ գանակը սրտումը խրած "Թ ա կ եր ի կ ո ղ մ ի ց" ազգու վերնագրով: Անձրևից առաջացած խորհորատի կողքով իջնում է մի ծանրաշարժ կաքը, որը աղային դէպի իր կալուածն է տանում: Սակայն երկու անցորդ կառապանի օգնութեամբ կապկպում են աղային և գլորում դէպի անդունդը. նորա գրպանում գտնում են յետոյ մի թուղթ նոյն "Թ ա կ եր ի կ ո ղ մ ի ց" վերնագրով: Կամ թէ չէ մի օր, երկու ձանապարհի մէջ նկատում են մի կանաղան հետեւեալ վերնագրով. "Թէ աղան համարձակվի հողային տուրքը հաւաքել, նա կը բարձրանայ այս կախաղանը: Ով համարձակվի վճարել աղային, նա ևս կուեննայ նոյն վախճանը": Գիւղացին էլ այս հանգամանքը մատի փաթաթան շինելով, այլ ևս չէր վճարում, մինչև որ ոստիկանները չէին գալիս ստիպում: Նա զգում էր որ մի ինչ որ աներևոյթ ոյժ պահպանում է իրան: Շուտով նա դադարում է բոլորովին աղային տուրք վճարել և ուժով ստիպում նրան իսպառ հրաժարիլ իր արտօնութիւնից: Գիւղերում գա-

նազան տեսակ ազդագրեր էին պատում, որոնք յայտարարում էին, որ սրանից յետոյ ոչ մի հողային տուրք չը պէտքէ վճարել, որ պէտքէ կրակ տալ ամրոցները և այրել հաստատութեան թղթերը, թէ այս բոլորը «Ազգային ժողովի» հրամանն է և այլն: «Հա՛ց, հա՛ց, ոչ հարկ և ոչ տուրք...» ահա այն նշանաբանը, որը լսվում էր ամեն կողմից, որը բղխում էր՝ երեք օր սոված ծարաւ մնացած երեխանց տէր մօր սրտից, հարկահանների ձեռքից դադ-բէդադ անող գիւղացու ուղեղից... «Թժղ կորչին վաշխառուները», - և նրանց ամբարները քար ու քանդ էին անվում, քարվանը կողոպտվում: «Թժղ կորչին ակցիզներ, մաքսապետերը» - և մաքսատները այրվում էին, պաշտօնեաները կոտորվում: «Պէտքէ այրել հարկերի ցուցակագրերը, հաշիւները, քաղաքային արխիւը» և թղթերի այդ կոյտը կրակի դոհ է լինում 1789 թ. յուլիս ամսին...

Առավարութիւնը քայքայվում է, կալուածատէր-ազաները դաղթում են, յեղափոխական հրգեհնը աւելի և աւելի տարածվում...

Պարիզում տեղի ունեցած մեծ անցքերը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ գաւառներում կատարված յեղափոխական շարժման արձագանք, շարժման, որը չորս տարի շարունակ դղրում էր անընդհատ իւրաքանչիւր մի քաղաքում, իւրաքանչիւր մի խրճիթում, և որի բնթացքում՝ ժողովուրդը իր կուրբում էր ոչ այնքան ուղղակի թագաւորի դէմ, որքան իր անմիջական թշնամիների, իր հարստահարողների, իր արխիւնը ծծող տգրուկների դէմ...



3257

3258

3259

3260

2017

